Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
հոկտեմբերի 6-ի նիստի N 39
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ 3/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումները	Իրականացման ժամկետը	Պատասխանատու կատարողը	Համակատարողը	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը
1	2	3	4	5	6
1.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի և «Համագործակցություն» ՍՊԸ-ի միջև 27.03.2015 թ. կնքված ք.Երևան, Վ.Սարգսյան փող. 3/3 հասցեում գտնվող անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի լուծում՝ վճարված 277752 ՀՀ դրամ գումարի վերադարձով, անշարժ գույքի նկատմամբ «Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի սեփականության իրավունքի վերականգնում	31.10.2016 թ.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարումն իրականացնող մարմին	«Համագործակցություն» ՍՊԸ (համաձայնությամբ)	ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:
2.	«Համագործակցություն» ՍՊԸ-ի և մասնակիցների միջև կնքված առուվաճառքի նախնական պայմանագրերից ծագած իրավունքների ցեսիայի պայմանագրերի լուծում՝ մասնակի չկատարման հիմքով: Ընկերության մասնակիցների ժողովի որոշում 1-ին և 2-րդ կետերի մասին համաձայնություն տալու վերաբերյալ: ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Պետական գույքն օտարելու մասին» N1675-Ն որոշման հիմքով կնքված նախնական պայմանագրերով սահմանված իրավունքների վերականգնում:	31.10.2016 թ.	«Համագործակցություն» ՍՊԸ (համաձայնությամբ)		ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6
3.	ՀՀ կառավարության որոշմամբ «Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի ավելացման համար ՀՀ պետական բյուջեից 644 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գումարի հատկացում՝ Վ.Սարգսյան 3 այրված շենքի 1-ին հարկի նախկին սեփականատեր ֆիզիկական անձանց իրական վնասի դիմաց հրաժարազնի վճարում:	30.11.2016 թ.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարումն իրականացնող մարմին		ՀՀ պետական բյուջե
4.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը ՀՀ պետական բյուջեից գումարի հատկացում Վ. Սարգսյան 3 այրված շենքի 1-ին հարկի նախկին սեփականատեր հինգ իրավաբանական անձանց 100 տոկոս բաժնեմասերը մասնակիցներից գնելու համար՝ 3 356 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով	30.11.2016 թ.	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն		ՀՀ պետական բյուջե
5.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ին կանոնադրական կապիտալի ավելացման միջոցով ՀՀ պետական բյուջեից գումարի հատկացում շենքի ներքին հարդարման աշխատանքների ֆինանսավորման համար:	30.11.2016թ.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարումն իրականացնող մարմին		ՀՀ պետական բյուջե
6.	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ին կանոնադրական կապիտալի նվազեցման միջոցով Վ.Սարգսյան 3/3 շենքի առաձնացում և ամրացում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը տեղակայելու համար:	Ներքին հարդարման աշխատանքների ավարտից հետո	«Սալսա դիվելոփմենթ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարումն իրականացնող մարմին ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն		ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում չի պահանջվում: